

ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻ ԵՎ ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հրապարակվող նամակներն ուղղված են բանասեր, բանաստեղծ Հովհաննես Մկրյանին (1831—1909) և հայագետ, լաղարյան ճեմարանի տեսուչ, պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանին (1858—1912)։

Նամակները պարունակում են պատմա-բանասիրական ուշագրավ փաստեր, ինչպես նաև հիշյալ մտավորականների գիտա-մանկավարժական գործունեությանը վերաբերող առանձին տեղեկություններ։ Դրանք արժեքավոր են նաև հայ մշակութային կենտրոնների փոխառնությունների բացահայտման ու գնահատման առումով։

Նամակները պահվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Թորոս Աղատյանի ֆ., Բ. XII, №№ 2220—2224, 2226, 2230, 2238, 2240—2241, 2244, 2250, 2265—2266, 2272, Գրիգոր Խալաթյանի ֆ., Բ. V, №№ 684—691)։ Նամակներն հրապարակվում են մասնակի կրճատումներով։

ՎԱՐԱՋԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՅԱՆԻՆ

1

8 հունիս, 1879

Ս. Պետերբուրգ

Արժանապատիվ հայր

Հովսեփ կաթողիկոսի¹ ժամանակին վերաբերյալ թղթակցություններն, որ բարեհաճեր էիք շնորհել ինձ արտագրելու համար՝ ուղարկեցի Ձեզ պ. Զավրիևի ձեռքով, և այսու հայտնում եմ Ձեզ խորին շնորհակալությունս, այդ ժողովածուի համար, խնդրում եմ երբ ստանաք այդ ծրարը պ. Զավրիևից՝ երկտողով միամտության տաք ինձ։ Վսեմ. Գաբր<իել> էֆ. Նորատունկյանը կհանձնե Ձեզ Թովմայի Արծրունվո² և Ղևոնդ վարդ.³ Պատմությանց մի մի օրինակը, որ խնդրեմ ընդունիր ի նշան հարգանացս։

Խոնարհ ծառ. Կ. Եզյանց

2

10 հունվար, 1888

Ս. Պետերբուրգ

Արժանապատիվ հայր

Ներսես Շնորհալու մատենագրության¹ մեջ, որ տպված է Կ. Պոլսում, 1825 թվականին, գտնվում է և Տուտեորդու Թուղթն առ Ն. Լամբրոնացին, որ նա գրեց Հաղթաթու միաբանության կողմից։

Պետք ունենալով այդ Թղթին՝ խնդրում եմ, արժանապատիվ հայր, որ գտնեք ինձ համար մի օրինակ վերոհիշյալ գրքից, կամ, եթե ծախու չկա,

գտնեք առժամանակյա գործածության համար մի օրինակ նորանից, որը շնորհակալությամբ կվերադարձնեմ՝ հարկավոր տեղեկությունները ստանալուց հետո:

Խորին հարգանքք մնում եմ առ Ձեզ խոնարհ որդի

Կար. Եզյան

3

9 փետրվար, 1888

Ս. Պետերբուրգ

Մեծապատիվ հայր

Շնորհակալությամբ ստացա Ձեր 23 թվականով նամակն, որով հայտնում էք խնդրած տեղեկությունները Շնորհալու Ընդհանրականի տպագրությանը և Տոլուեորդու Թղթի մասին:

Եթե Ձեզ նեղություն չի լինել՝ հաճեցեք խնդարկել Ընդհանրականի, բացի Պուշկինի տպագրությունը (1825 թ.), նաև Ձեր հիշած Երուսաղեմի տպագրությունը 1871-ին՝, որ չունիմ: Սոցա գինը, հիմնվելով Ձեր նամակի վերա, թե Երուսաղեմին արժե իբրև ուրբի ու կես, իսկ Պուշկինը՝ երեք, ուղարկում եմ ինչ ուրբի, որ եթե պակասի գրքերին և ճանապարհածախսին՝ մնացածներ կուղարկեմ հաճությամբ:

Մնում եմ առ արժանապատիվ Հայրդ անկեղծ հարգանքք խոնարհ որդի

Կար. Եզյան

4

12 ապրիլ, 1888

Ս. Պետերբուրգ

Արժանապատիվ հայր

Մեծ շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած ծրարն, որ պարունակում էր խնդրած Ընդհանրականի երկու տպագրությունները և կրկին նամակներդ այն գրքի առիթով: Թե՛ իմ Ձեզ գրած նամակիս և թե՛ Ձերիններին ուշ տեղ հասնելուն պատճառն հավանորեն ձյան ահագին հյուսերն էին, որոնց պատճառով հարավային Ռուսաստանում երկաթուղիների ընթացքն առ ժամանակ դադարեց էր:

Մաղաքիս Աբեղայի տեղվույս տպագրությունը՝ բոլորովին հատեր է և գտնելը կարելի չէ, բայց մեծա<բզո>հրատարակիչն հայտնեց, որ յուր օրինակը, որից նա արել էր այդ հրատարակությունը, թերի է եղել, և թե լավագույն է Երուսաղեմի հրատարակությունը՝ նույն 1870 թվին: Նույնպես ցավում եմ հայտնել, որ «Հյուսիսսփայլի» Ձեր խնդրած համարները, հակառակ ջանքիս, ոչ մի տեղ գտնել չկարողացա:

Մի գրական աշխատության համար կարոտ եմ տեղեկություններ ստանալու ներսես լամբրոնացու մասին, թե ե՞րբ նորա անունն մեր եկեղեցում հիշվել սկսավ և դադարեցավ, և թե ինչո՞ւ համար նորա Պատարագամատուցը² անվավեր համարվեցավ: Այս որոշումներն արդյոք ժողովների կարգադրությամբ եղա՞ն, թե կաթողիկոսների հրամանով: Իմ մինչև այժմ ունեցած տեղեկություններս համառոտիվ սոքա են, թե ն. լամբրոնացու անունն սկզբից

ի վեր չէ հիշվել մեր եկեղեցում և չէ գտնվել Տոնացույցներում՝ մինչև 1820 թվականը, երբ կաթողիկ հայոց Միության խնդիրն ուղարկելիս, սոքա ի միջև այլոց պայման էին առաջարկում՝ Ն. Լամբրոնացուն դնել ի դուրս տոների սրբոց և հապավել Տաթևացվո՞՞՞ և Որոտնեցվո անունները և թե այս նորամուծությունն ընդունելություն գտավ միայն Տաճկաստանում, այն ևս ոչ միշտ:

Եթե այս խնդրին վերա, նույնպես և Պատարագամատուցի մասին, ավելի ընդարձակ տեղեկություններ հաղորդեք, և մանավանդ մատնացույց անեք այն աղբյուրները, որտեղ կարելի լինի գտնել հարկավոր տեղեկությունները, ինձ շնորհապարտ կկացուցանեք առ Զեզ:

Դնելով նամակիս հետ Զեր Ընդհանրականների ճանապարհածախսն մի ուրիշ՝ կրկին շնորհակալությամբ մնում եմ առ արժանապատիվ Հայրդ խորին հարգանք:

Խոնարհ որդի Կար. Եզլան

5

18 հունվար, 1891

Ս. Պետերբուրգ

Արժանապատիվ հայր

Ընդունեցի Զեր 20 գեկտ. 1890 նամակը: Շնորհակալ եմ Զեր խրախուսական խոսքերի համար՝ իմ հրատարակության մասին¹, իսկապես արդյունք է իմ քնն հանգստյան ժամերից խլած վայրկյանների: Կ. Պոլսո սրբազաններից ոչ թե միայն կարծիք, այլ գրքի ստացման լուրը դեռ չեմ առել, այնինչ Ալիշանից ստացա նամակ, ուր նա երկարորեն կճգնի արդարացնել յուր Սիսուանի² մեջ հայտնած կարծիքները, բայց բավական թույլ կերպով, անտարակույս ունիմ պատասխանելու նորան...

Օգուտ քաղելով Զեր թույլտվությունն նամակիս հետ ուղարկում եմ Դարտելիս 5 օրինակը, որոնցից չորսը կխնդրեմ հասուցանել այն անձանց, որոնց անունները գրքերի վրա նշանակած եմ, իսկ երկուսը, որոնց վրա շփոթության համար անունները չեմ դրել, խնդրեմ Մ 1 հանձնել վսեմ. Գաբրիել էֆենդի Նորատունկյանին և Մ 2 վսեմ. Նուրյան էֆենդուն: Պետերբուրգ վերադառնալուց հետո, նույնքան ամսո մեջ դրել էի Գաբրիել էֆենդի Նորատունկյանին նամակ, որի մեջ հայտնել էի իմ անկեղծ շնորհակալիքս այն մտերմության և հյուրասիրության համար, որ պատիվ ունեցած էի վայելել նորա ընտանյաց մեջ: Բայց չգիտեմ արդյոք այդ նամակը հասա՞ծ է նորա ձեռքը, թե մինչև այսօր կմնա ոռոսաց թղթապան մեջ: Ծտ այսու ականջիս հասավ Պոլսո ազգայնաց անմխիճար կացության մասին այլևայլ լուրեր և ես զգուշացա այլևս դրել: Ուստի, խնդրում եմ Զեզ, արժանապատիվ Հայր, հաղորդել ինձ ի միամտություն այդ նամակի հասնելու մասին:

Զեզ հայտնի է, որ իմ Պոլիս վերջին գալուս նպատակն էր խորհրդակցել Սանասարյան վարժարանի ապագա վիճակի մասին և մշակել նորա կանոնադրությունը, որո հորինումն հանձնված է կտակով ինձ: Դժբախտաբար, պատրիարքարանի անիշխանության պատճառով և առհասարակ ազգայնոց լարված վիճակը, արգելք եղան ինձ խորհրդակցելու ս. Պատրիարքի և ուրիշ նշանավոր ազգայնաց հետ: Բայց և այնպես Զեզ հայտնի բարձր հատկություններով

«Ժողոված մեր բարեկամը շատ աշխատեցավ ինձ հետ ի միասին և մշակեցինք վարժարանի կանոնադրությունը, որ այժմ պատրաստ է և կարող է պատրիարքի ձեռնանով գործադրության առաջարկվել, մանավանդ որ, կփափագեի որ առաջ կատարել այդ սրբազան պարտքը, որ դրած է իմ վերա հանգուցյալ բարեկամ, վարժարանի հիմնադիրը: Բայց նախքան այդ քայլը անելս վստահանում եմ խնդրելու նախապես խորհուրդ հարցնել վսեմ. Գաբրիել էֆենդուց, թե արդյոք խորհուրդ կտա՞ ինձ այժմ առաջարկել և թե ինչպես, ուղղակի պատրիարքարանը ներկայացնել կամ թե նորա ձեռնանով, որը ես նախադասելի եմ համարում:

Ուրախ եմ, որ ազգային վիճակը այսօր յուր օրինավոր կերպարանքը առած է...

Խոնարհ որդի Կար. Եզյան

6

3 օգոստոս, 1891

Ս. Պետերբուրգ

Մեծապատիվ հայր

Մեղավոր եմ Ձեր առջև, որ մինչ արդ ուշացրի Ձեր վերջին պատվական նամակի պատասխանը: Մեծապես շնորհակալ եմ Ձեր համակրության համար առ Սանասարյան վարժարան, որ կհուսամ Աստծո ողորմածությամբ և Ձեզ նման ազնիվ և ազգասեր ազգայնոց գործունեությամբ մեծ ազդեցություն կունենա մեր ապագա սերունդների վերա: Այսօր Կարինեն ստացա ջննությանց և ուսումնավարտ աշակերտների վկայականների բաշխման հանդեսի նկարագրությունը: Այնքան սրտաշարժ և մխիթարական էր հանդեսը, որ առանց արտասուքի կարող չէի կարդալ: Կուսակալը յուր պաշտոնյաններով ներկա էր և քաջալերական խոսքերով շնորհավորություններ և բարեմաղթություններ հայտնեց: Կհուսամ կասկածները փարատած են այժմ և այդպիսով վարժարանի գործերը դուրսնալու կընթանան: Շիշմանյան եպիսկոպոսն էլ փոխեց յուր գույնը և լեզուն. դիտեք ումն ենք պարտական: Լավ մխիթարվեցա կարդալուս Իզմիրյանի մրցանակաբաշխության հանդեսի նկարագրությունը: Փառք աստծուն, այդ գործն էլ մեռած չէ, և անմոռաց բարեկամիս ցանած սերմը կաճե հանձնաժողովի պատվական անդամոց խնամոք:

Միանգամայն համախոհ եմ Ձեզ՝ կաթողիկոսական խնդրո նկատմամբ, որքան ինձ հայտնի է, մեր տերությունը դիտավորություն չունի ազդեցություն բանեցնել կամ միջամտություն գործել ընտրության մեջ, բայց եթե անվստահելի անձ ընտրվի, հաստատելու չէ, անվստահելին առայժմ կհամարվի միայն Մուրադյան եպիսկոպոսը: Էջմիածնի միաբանության մեջ կտրեմ կատարյալ անմիաբանություն և բնավ ցանկալի չէ, որ նորանցից մեկը ընտրված լինի, մանավանդ Արիստակես եպիսկոպոսը: Շատ կփափագեմ, եթե կարելի է ձեռք բերել Միք<այել> Ասորվո՞ւ՝ առաջին տպագրությունը (Երուսաղեմի): Կըխնդրեմ Ձեզ պատվիրել գրավաճառներին:

Ամսույս 10-ին կամ 12-ին միտք ունիմ Ձ ամսով Եվրոպա գնալու, կմասնակցեմ և Լոնդոնի արևելագետների ժողովին, չգիտեմ ո՞վ կա այնտեղ հայերից տեսության արժանի: Եթե բարեհաճեիք ինձ այդ մասին հրահանգ տալու՝ ուղղեցեք նամակը իմ անվան: Frankfurt sur Main Poste Restante.

Եթե պատահե Զեղ Պոլիս տեսնվելու Ալեքսանդր Անանովի հետ, կխնդրեմ
րարե հիշել, աղնիվ հայ է, կարող եք հետը խոսել:

Զերդ գերապատվության աջակից ապաստան Կար. Եղյան

7

19 օգոստոս, 1893

Ս. Պետերբուրգ

Արժանապատիվ հայր

Ստացա Ձեր հունիսի 8/20 գրած նամակը, որը յուր բովանդակությամբ
մեծ բավականություն պատճառեց ինձ: Իրողությունը վերջ տվավ զանազան
ենթադրություններին, որոնք տեղի էին ունենում Վեհափառ Հայրապետի հաս-
տատության և ուղևորության վերաբերությամբ: Ամեն թուփալ ու մառախուղ
մաքրվեցան և այսօր ճշմարիտ և անկեղծ սրտով պիտի ուրախանանք, որ
կաթողիկոսական գործերը սպասածից ավելի հաջող < են > և անվտանգ կա-
տարումն առած...

Ներկա նամակովս, արժանապատիվ Հայր, ցանկանում եմ մի կարևորա-
գույն խնդրի վերաբերությամբ Ձեր կարծիքն իմանալ: Հույս ունեմ, կներեք,
որ Ձեզ անհանգստացնելու եմ և կհայտնեք Ձեր կարծիքն այդ մասին, որը ինձ
համար մեծ նշանակություն կունենա:

Շատ ժամանակ չի անցել այն օրերից, երբ հայ գրականության ասպա-
րեզից մեկ-մեկի ետևից պակասեցան ականավոր և փորձառու հայաբաններ:
Այդպիսիների մահը բավական չէ, որ մեզ զրկեց մեր կենդանի աղբյուրներից,
այլև նշանավոր ազդեցություն ունեցավ հայերեն լեզվի ապագա դրության
վերա: Բավական է աչքի առնել մեր շուրջը, տեսնելու և համոզվելու համար,
որ այդ իրողություն է: Իսկական հայերեն գիտցողներ չկան ոչ միայն հասա-
րակության մեջ, այլ և այն հաստատություններում, որոնք պարտական են
արտադրել լավ հայերեն լեզու, հայ մատենագրություն և հայոց պատմություն
իմացողներ: Չկան հայկաբաններ մեր ոչ մի դպրոցում, սկսած ս. էջմիածնի
Գեորգյան ճեմարանից, մինչև Սանասարյան վարժարանը: Բայց ես թողնում
եմ մյուսները և առանձնապես շեշտում եմ Սանասարյան վարժարանի վերա:
Ահա այս իսկապես ցավալի իրողությունը աչքի առաջ ունենալով, ես մտա-
ծում եմ թե ինչ միջոցով կարելի է դորա առաջն առնել և ցանկալի նպատակին
հասնել:

Գուցե այս հարցի ամենամոտ պատասխանը այս լինի. թե պետք է երի-
տասարդներ ուղարկել Եվրոպա կամ Միսիթարյանների մոտ, ուր սովորելով
և ուսումնասիրելով հայ լեզուն՝ կզան և կավանդեն մեր դպրոցներում: Այս
ձևը թեև, ըստ երևույթին, նպատակահարմար է, բայց իմ փորձառությամբ
ապարդյուն է և ահա թե ինչու: Եվրոպա գնացող երիտասարդները ուսանում
են օտարազգի ուսումնականների մոտ, որոնք նորանց չեն կարող տալ ավելի
ոչինչ, քան այն ընդհանուր լեզվաբանական օրենքները, որոնցով կարելի է
համեմատական լեզվագիտությամբ պարապել: Նորանք ծանոթանում են լեզվի
օրենքների հետ, սովորում են բառերի արմատական լուծելու եղանակը, ծա-
գում, բայց չեն ծանոթանում լեզվի ոգուն, առանձնահատկությանց հետ, հայ
լեզվի շարահարուստ նուրբ կանոնների հետ, հայերեն լեզվով մտածելու
լրաբեր 6—7

և միտքը այստեղ հեղանակի հետ: Այսպիսով, կրթված երիտասարդները կարող են լեզվաբանությունը պարապել, բայց չեն կարող դեղեցիկ ոճով հայերեն գրել, գրաբար կամ աշխարհաբար կենդանի լեզուն իմանալ: Մի խոսքով, դորանք լեզվագետ կարող են համարվել և ոչ հայկաբան: Այնինչ մեղ հարկավոր են հայկաբաններ, որոնք անսխալ շարահարեն, ըմբռնած լինեն մեր անմահ նախնի հայկաբանների լեզվի ոգին: Իսկ այսպիսի հայկաբաններ ծվորապաշտում չի կարելի պատրաստել...

Իմ կարծիքով, ամենից լավն այն է՝ հետևել մեր նախահայրերի սովորությունը, երբ հայկաբանները հայերեն լեզուն սովորում էին առ ոտս մի հայտնի անձնավորության: Այս միակ նպատակահարմար միջոցն է: Սույն նպատակի համար հարկավոր են աչքի ընկնող հայկաբաններ առ ոտս, որոնց կարելի լինի ուսանել հայկաբանություն: Ռուսաստանում չկա, մնում է միայն Տաճկաստանում փնտրել, ուր դեռ կան Գարագաշյանի¹, Գուրգենի² նման նշանավոր հայկաբաններ, որոնք գուցե կարող լինեն այնպիսի մարդիկ պատրաստել, ինչպիսին հարկավոր են մեր կյանքի համար: Ես մտածում եմ ընտրել տալ Սանասարյան վարժարանի սաներից և ուղարկել Պոլիս այդ հայկաբանների մոտ սովորելու: Այնուհետև, կարելի է մի քանի ժամանակով նորանց Ստոկհոլմ—Նորայր Բյուզանդի³ մոտ <ուղարկել>, ուր կվարժվեն մատենագրական մասում: Եվ որովհետև այդ հայկաբաններից յուրաքանչյուրը մի որոշ մասում ավելի հայտնի է, ինչպես Գարագաշը՝ պատմական և Բյուզանդը՝ մատենագրական մասում, ուստի այդ աշակերտները մի որոշ ժամանակ մեկի, ապա մյուսի մոտ մնալով, կարող կլինեն լավ հայկաբաններ դուրս գալ, զորեղ լինելով միանգամայն թե՛ պատմության, թե՛ մատենագրական, և թե՛ լեզվաբանական կողմից, հետևաբար և լավ ուսուցիչներ Սանասարյան վարժարանի համար: Ահա այս նպատակս իրագործելու ձգտումն է, որ դրդում է ինձ Ձեզ անհանգստացնել և Ձեր կարծիքն իմանալ այդ մասին: Որչափ այդ կարծիքը մանրամասնորեն բացատրված լինի, այնչափ ավելի երախտապարտ կլինեմ, մանավանդ կարող եմ իմանալ, թե ինչ ձևով և եղանակով և ինչ ծախսով կարելի կլինի այդ միտքն իրագործել, եթե Դուք ևս հավանեք:

Հավատացած եմ, որ որքան իմ սրտին մոտ է, այնքան և Ձեզ համար նվիրական է այս կարևոր խնդրի լուծումը, ուստի և չեք զլանալ հարկավոր տեղեկություններ հաղորդել այդ մասին:

Խնդրեմ ներփակյալ նամակը հանձնել մեր վսեմապատիվ բարեկամին Գաբրիել էֆենդի Նորատունկյանին:

Գրելուս խնդրեմ հետևյալ հասցեով այսուհետև ինձ գրել:

St. Petersburg, Nikolaevskaya (Николаевская) N 35.

Մնամ արժանապատիվ Հայր Ձեր խոնարհ ծառա Կարապետ Եղյամ

Արժանապատիվ հայր

Շնորհակալությամբ ստացա Ձեր հոկտեմբերի 25 գրած նամակը պ. Գուրգենի նամակի հետ, որի մեջ հայտնած էր հայոց լեզվի վարժապետացուների ուսման ընթացքի տնօրինությունը և ծրագիրը: Այդ նամակը ուղար-

կեցի Կարին և Լորբ այնտեղից պատասխան և տեղեկություն ստանամ, Ձեղ կհաղորդեմ:

Պ. Գուրգենի նամակի մեջ որոշված չէ, թե օրական քանի ժամ պիտի պարասի: Չէիք բացատրել և այն, թե ի՞նչ պատճառներով Գուրգենին նախադասել եք Գարագաշեն: Արդյոք օգտավետ չէ՞ր լինիլ լեզվի կատարյալ ուսումնառության համար պատրաստվող աշակերտները պ. Գուրգենի մոտ մնալով հանդերձ, մասնավոր դասեր առնեին և Գարագաշեն: Մեր բարեկամին նկատողություններ, աշակերտաց պահպանության ծախսուց նկատողությունը, ճիշտ և ընդունելի են:

Ընդամին ուղարկում եմ Իզմիրյանցի¹ կտակի գործնական հանձնաժողովս մատենադարանի համար Ասողիկը² և Ղևոնդը³, ուղարկում եմ և Դարտելի «Ժամանակագրություն հայոցը», իսկ Խորենացու և Ագաթանգեղոսի համար կգրեմ Թիֆլիզ, որովհետև իմ մոտ չկան:

Ռաֆայել Պատկանյանի ընտիր երկասիրությունները⁴ ես եմ ուղարկել և զգուշության համար՝ առանց նամակի: Եթե անվտանգ և ապահով է տեղ հասնում, սիրով կուղարկեմ և մեր բարեկամի համար, որից ցարդ նամակ չունեմ:

Խնամակալության հատվածների վերաբերությամբ գրած թուղթը ստացա և պատասխանեցի...

Մնամ խոնարհ որդի Կար. Եզյալ:

9

1 հոկտեմբեր, 1894

Ս. Պետերբուրգ
Nikolaevskaya, 35

Արժանապատիվ հայր

Անցյալ հունվարի 20-ին գրած նամակը ստացա: Շատ ցավում եմ Ձեր հիվանդության համար, տացե տեր, որ կատարյալ առողջություն գտնեք և կարող լինեք շարունակել նվիրական պաշտամունքը հօգուտ ազգի և եկեղեցվո:

Ուրախ եմ նմանապես, որ Իզմիրյան հանձնաժողովի հանձնարարությունը անթերի կատարվեցավ և ստացվեց թե՛ իմ ուղարկածները և թե՛ Տփլիսեն պատվիրածները:

Ինչպես Ձեզ հայտնի է, պ. Ալեքսանդր Երիցյանը¹ «Արձագանքի» մեջ մաս-մաս հրատարակում էր իր մի աշխատանքը՝ «Ս. Էջմիածնի վերջին կաթողիկոսների ընդունելությունը Ռուսաստանում»: Այժմ այդ երկասիրությունը լրացնելով և առանձին գրքով հրատարակելով, պիտի ներկայացնե մրցանակաբաշխության, մի այլ՝ բովանդակության ավելի համապատասխան վերնագրով: Կարծում եմ, որ այդ աշխատությունը թե՛ յուր նյութի կարևորությամբ և թե՛ յուր ուրիշ շատ արժանավորությամբ յուր վերա կհրավիրե Հանձնաժողովի ուշադրությունը...

Կար. Եզյալ

Արժանապատիվ հայր

Բավական ժամանակ անցնելուց հետո ստացա Ձեր վերջին մարտի 9/21 գրությունը, որի մեջ հայտնում եք, որ տեսակցել եք պ. Ուսպենսկու հետ, ստացել եք գրքերը և հանձնել եք ըստ պատկանելության։ Սորա համար հատուկ շնորհակալությունս եմ հայտնում։

Նույն նամակի մեջ հայտնում եք, որ հարստահարությանց տեղեկագիրը պատրաստ է, ցանկալի էր շուտով ստանալ, որպեսզի հարկավոր թղթերը պատրաստելուց հետո հանձնեմ նորին վեհափառության։

Ձեր նկարագրած տխուր հանգամանքներին կավելացնեմ, որ ճշմարիտ է այն, թե զանազան արգելքների պատճառով չի հաջողվում վեհափառի Պետերբուրգ գալը, սակայն չենք հուսահատվում, հույս ունենք, որ արգելքները մեղմեցնելու կվերանան։

Մեր ներկա վիճակի մասին «Արձագանք» լրագիրը հետաքրքիր և առատ նյութ է պարունակում, արդյոք հնարավոր չեք համարիլ, եթե առ ժամանակ հասցնեմ Ձեզ այդ թերթի համարները։

Սանասարյանի կտակակատարները պարտավոր են, հիմնադրի մահից ոչ ուշ քան հինգ տարի, հրատարակել յուրյանց գործունեության նկարագիրը և արդյունքը։ Այդ հաշիվը այժմ պատրաստ է և շուտով պետք է տպագրվի առանձին գրքույկով։ Ցանկանալով որքան կարելի է տարածել ժողովրդի մեջ այդ հայտարարությունը, մտածեցի խնդրել «Արևելքի» խմբագրությունից՝ ցրել յուր բաժանորդներին։ Եթե այդ հնարավոր համարեք, կխնդրեմ ինձ հայտնեք, թե որքան բաժանորդ ունի «Արևելքը», որպեսզի ըստ թված բաժանորդաց հաշվի օրինակներ ուղարկեմ...

Մնամ խոնարհ որդի Կառապետ Նզյան

Արժանապատիվ հայր

Պատիվ ունեցա ստանալ Ձեր հոկտեմբեր 9/21 թիվ նամակը, որին և էջտապեմ պատասխանել։ Ձեր նամակի մեջ զարմանք կհայտնեք, որ ես իմ առ Ձեզ գրած նամակում ոչ մի ակնարկություն չեմ արել սեպտեմբեր 18-ին Կ. Պոլսում տեղի ունեցած անցքի մասին և կենթադրեք, թե գուցե այդ մասին ոչինչ տեղեկություն չունինք։

Այդ դեպքը պատահելուն պես՝ հեռագրալուրը հասավ և ամենքիս գուժեց կատարված արյունահեղությունը, որի ժամանակ մարդիկ ոչխարների պես էին կոտորվել։ Սիրտս մորմոքվում էր, երբ հետզհետե նորանոր անմխիթար լուրեր էին հասնում կոտորածների մասին։ Փափագում էի ավելի մոտ աղբյուրից ծանոթանալ մանրամասնությանց հետ, սակայն զգուշությունը և Տաճկաստանում թագավորող կասկածամտությունը ինձ ստիպեցին նամակների մեջ

ոյինչ չհիշել այդ մասին, հուսալով, որ եթե հնարավոր է բարեկամներս ինքնաբերաբար կհաղորդեն ինձ այդ մասին: Հուլիս արդարացի եղավ Ձեր շնորհիվ:

Անմխիթար չարիքի մեջ միակ մխիթարությունը ամենապատիվ պատրիարքի օրինակելի և ինքնուրաց գործունեությունն է: Ավելի քան դժվար է այդպիսի պարագաներում սառն ու հեռատես գործունեություն ունենալը:

Ամենապատիվ պատրիարք հայրը արդարացրեց ազգի հույսերը, որով և պատմության էջերում անմոռաց հիշատակ կվաստակե:

Ցավալի է միայն, որ վերջին ժամանակներս մի տեսակ սառնություն է նկատվում օտար պետությանց առ հայոց դատին հարաբերությանց մեջ: Դուրս պատճառը, հավանաբար, անխոհմանների վարմունքն է: Մի խոսքով ճգնաժամի մեջ ենք և միայն աստծուն պիտի հուսալ: Ցանկալի է իմանալ, թե սեպտեմբերի 18-ին Պոլսում և զանազան տեղերում պատահած արյունահեղության սկսողները այլազգիներն են, թե հայերը, որոնց վերա կուզե ծանրացնել հանցանքը օսմանյան կառավարությունը: Շատ ու շատ գոհ կլինեմ, եթե հնարավոր է չզլանալ հաղորդել ինձ վերոհիշյալ դեպքերի մանրամասնությունները, մանավանդ ի՞նչ ապագա է գուշակում իրաց այժմյան վիճակը:

Կգրեք, թե դուք ստացել եք անուն Ձեր ուղարկած Սանասարյանի կտակի գործադրության տեղեկագիրը, բայց լուր չունիմ, թե արդյոք պատկանելի խնամակալությունն ստացել է նորա անդամոց համար անուն Ամենապատիվ պատրիարքի ուղարկած օրինակները:

Ձեր աջակից ապաստան Կար. եղյան

12

7 հոկտեմբեր, 1898

Ս. Պետերբուրգ

Nikolaevskaya, 35

Արժանապատիվ հայր և ազնիվ բարեկամ

Օտար և հայ մատենագրության մեջ երբեմն անցողակի կերպով կհիշվի Իսրայել Օրի անունով մի անձնավորություն, որը ԺԸ դարու սկզբում փորձ էր արել ազատել հայոց ազգը պարսկական բռնակալությունից: Այդ նպատակի իրագործման համար նա դիմել էր Եվրոպիո ինչ-ինչ գահակալներին, մանավանդ Ռուսիո Պետրոս Ա Մեծ Կայսրին: Օտարականները, առանձնապես կաթոլիկ միսիոներները, այդ անձնավորությունը կձգտեն ներկայացնել իբրև մի խաբեբա և խարդախ վաճառական, որո գործունեության նպատակն ու շարժառիթը եղել է ոչ թե որևէ գաղափար, այլ լուկ յուր անձնական շահը: Նույնիսկ հայր Ղ. Ալիշանը Իսրայել Օրիին իբրև մի բախտախնդիր անձն կհիշե: Ըստմանակակից պատմիչները թեև երբեմն կհիշեն նորա անունը, սակայն առանց կանգ առնելու նորա անձնական հատկությանց և ազգասիրական գործերի վերա:

Իմ ուշադրությունը վաղուց գրավել էր այդ անձնավորությունը և նորա գործունեությունը: Այդ էր պատճառը, որ ես վերջին 10 տարվա ընթացքում աշխատեցի ձեռք բերել Մյունխենի, Վիեննայի և մանավանդ Մոսկվայի դիվանատանց մեջ պատահած թերթերը այդ մասին և Իսրայել Օրիի վերաբերյալ

տերությանց հետ ունեցած բանակցութեանց արձանագրութիւնքը: Այդ թղթերը վերականգնեցին ազգասեր և կորովամիտ անձի բարոյական պատիւն, որը ամեն ինչ, թե՛ յուր կարողութիւնը, թե՛ յուր ընտանիքը և մինչև իսկ յուր կյանքը զոհել է ազգը ազատելու զազափարին: Այդ արձանագրութիւնքը կպարտնակեն յուրյանց մեջ Հայաստանի վերջին երկու հարյուր տարվա պատմութիւնը և ազգի այդ միջոցի դառն վիճակի նկարագրութիւնը: Արձանագրութեանց այդ ժողովածուն՝ թվով իբր 305 հատ, Ս. Պետերբուրգի գիտութեանց կայսերական ճեմարանը արժանի դատեց յուր ծախքով տպագրել տալու:

Ժամանակիս պայմանները աչքի առաջ ունենալով, օգտավետ համարեցի այդ հրատարակութեան համար մի ընդարձակ առաջաբան պատրաստել՝ Ռուսաց տերութեան հայոց ազգի հետ ունեցած հարաբերութեանց մասին, սկսած Պետրոս Ա կայսրից մինչև մեր օրերը: Առաջաբանում մի առ մի հիշված են մեր ազգի արած ծառայութիւնքը, կրած զոհաբերութիւնքը հօգուտ Ռուսաց կայսրութեան և կայսերական հրովարտականքը հայերին, քաջալերութիւնքը և գոհունակութիւնքը: Իբրև գրքի հավելված՝ տպագրված է մի քաղվածք Գուբեա ճանապարհորդութեանից (Ֆրանսերեն լեզվով)², որը շատ հազվագյուտ գիրք է: Հավելվածում տպված է և հռչակավոր ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենի³ մի հիշատակարանը, որ ցարդ անտիպ էր մնացել: Գիրքը այս օրերս տպարանից լույս տեսավ և ես պարտք կհամարեմ ներկայացնել դորա մի օրինակը Ձերդ բարձր արժանապատիւութեան: Թեև արձանագրութեանց մեծագույն մասը ռուսերեն է գրված, բայց կան և գաղղիներեն, լատիներեն և նույնիսկ ժամանակակից հայերեն լեզվով գրվածներ: Առաջաբանը, որ միանգամայն ռուսերեն է, մտադիր եմ հայերեն հրատարակել:

Ուրախ և մխիթարված կլինեմ, եթե այդ աշխատութիւնս որևէ օգուտ և ազդեցութիւն ունենա դեպի բարին փոխելու այժմյան տրամադրութիւնք առ մեր խեղճ ազգն:

Ուղարկված երկու գրքերից մի օրինակը խնդրեմ ընդունել Ձեր գրատան համար, իսկ մյուս օրինակը հանձնել մեր պատվարժան բարեկամին: Կխնդրեմ նույնպէս հաղորդել նորան՝ գրքին վերաբերյալ նամակիս բովանդակութիւնը քի տեղեկութիւն:

Ձեր աջակից ապաստան Կառ. Օզյան

Արժանապատիվ հայր և ազնիվ բարեկամ

«Արևելյան մամուլ» խմբագիր-հրատարակիչ պ. Մամուրյան¹ Ձեր միջոցով ստացած նամակում կգրեմ, թե երկար տարիներ ի վեր այդ օրաթերթի մուտքն ի Ռուսաստան իբր թե արգելված է, ուստի կխնդրեմ ինձ միջնորդել այդ արգելքն վերացնելու և նորեն թույլատրելու անխափան տարածվելու ի Ռուսաստան: Ես չգիտեմ թե ինչ հիմնաց վերա Մամուրյանը այդ կարծիքն ունի: Եթե մի որևէ համարի մեջ տպած լինեն հակապետական հողվածներ, ցենզուրան միայն այդ համարն է արգելում առանց արգելքը օրաթերթի վերա անցնելու: Սակայն, եթե այդ իրողութիւն է, այն ժամանակ խորհուրդ կտամ դի-

մեկ Բիֆիսիս պ. Քիշմիշյանին², որ գրաքննիչ գոլով՝ կարող է հարկավոր տեղեկությունք և խորհուրդ տալ պ. Մամուրյանին...

Կար. Եղյան

ՐԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ

14

8 մայիս, 1888:
Վենետիկ, Ս. Ղազար

Սիրելի բարեկամ

Ձեր Վիեննային գրած թղթեն առաջ ընդունեցա ի ձեռն պ. Հ. Արիստակեսի¹ ձեր կենդանագիրն, որուն համար իմ հատուկ շնորհակալությունս կհայտենմ, հղելով փոխադարձաբար առ սերդ իմ կենդանագիրս, զոր խոստացա առաջ քան վերջին հրաժեշտն Ձեր ի Վանայս:

Իսկ գալով ուղղակի ի պատասխանի վերջին թղթոցն Ձերդ կծանուցանեմ, թե Գոշի Դատաստանագրոց ի Ձենջ նշանակված գլուխներն, հավատարմաբար ընդօրինակեցի ի բուն բնագրեն՝ ըստ փափագանաց Ձերոց, հանդերձ հիշատակարանով: Գաղափարողեն, թեպետ և սիրով օրինակեցի ու օրինակեի, եթե կրկինն ես կամենայիք, պահել միանգամայն զկույր հնազանդության, սակայն աչք մտացս, ընդօրինակած ժամանակ գոգցես իմն կորոնեին զվասն էր և կասեի ընդմիտս, արդյոք սխալ ընդօրինակած է առաջնում: Զայն ծրարյալ կգտնեք ի ծոց նամակիս: Ընդունեցեք իմ կրկին շնորհակալությունս մասնատփին համար, զոր շուտով քան զոր կարծես ուղևտ արարիք, ներելով միանգամայն Ձեզ տված ակամա ծանրությանը: Ձեր սիրալից ողջույնը մատուցի առ գերապատիվ Աբբահայրն, շնորհապարտ նահապետին ազգիս և վանայս վարդապետ Հ. Ղևոնդին² և առ ամեն հարս, ամենք առ հասարակ և ի մասնավորի վերջիս կողջունե զՁեզ:

«Արձագանքի» հունվար և փետրվար ամիսներում լույս տված թերթերն ընդունեցանք և հետզհետե պիտի ընդունենք: Արդարև հետաքրքրական են Գյուտ վարդապետի տված տեղեկություններն հայերեն ձեռագրաց մասին³, բայց իրավամբ լսեցի Հ. Ղևոնդին, թե մերթ անճշտություններ կան նորա տված տեղեկությանց մեջ և մերթ հիշատակարանաց մեջ թվականներն, անվանք անձանց զանց եղած են, որ այն հրատարակության անկեղծության վրա տարակույս կուտան: Հովհաննու, Անանիա և Խոսրովիկ թարգմանչի ցայդ անձանոթ հհամարի, մինչդեռ մենք ի վաղուց ունենք զայն:

Ռուսաստանն ուղարկելի ծրարներ կամ արկղեր կարելի <է> վանքի վերա ղրկել, կարելի է նույնպես ուղղակի Հ. Ղևոնդին ուղղել առանց փոքրս ինչ նեղություն պաաճառելու նորան, որովհետև ոչ թե նա, այլ միշտ վանաց սպասավորը ծանուցյալ է և կարգ ըստ մերումն հայտարարություն անել որևէ բան մի ի թղթատան և ի մաքսատան: Այսօր գրասենդանիս վերա եղած գրյանը կարգավորած ժամանակ աչքիս հանդիպեցավ Ձեր գերմաներեն «Marchen und Sagen»⁴ գրվածքը, զոր ես կարծեի, թե Ձեզի վերադարձուցի: Հուսամ, թե կներեք մոռացությունս, կուզեի ուղարկել, բայց վախենալով, որ Ձեր բացակայության պատճառով կարե կորսվել, ուստի հետաձգեցի մինչ:

որ լսեմ թե լայպցիգ հաստատված եք:— Կցանկանայի, որ Ձեր թղթոց միջոցով գեթ հաճեիք լայպցիգեն ինձ տեղեկություններ հաղորդել նորանոր հրատարակությանց մասին տոհմային պատմության և գրականության վերաբերյալ: Փ. Մյուլլերի⁶ Մեսրոպյան նշանագրաց վերա հորինած երկասիրությունն ե՞րբ լույս պիտի տեսնե և ի՞նչ միջոցով կարելի է ձեռք բերել: Նորա հասցեն ես չգիտեմ: Հ. Արիստակես քիչ օրեն ի Կ. Պոլիս պիտի վերադառնա և անտիյուր կենդանագիր Ձեզ պիտի ուղարկե: Առայժմ շատ բարև կնե: Հ. Գաբրիելեն⁶ տեղեկություն կսպասեմ այսօր եկավ ոտացն մերոց հ. Մանուկի Քաշունվո⁷ և Եզ. Հովսեփա⁸:

Մեծարանք ազնիվ բարեկամիդ մնամ
Հ. Բարսեղ Սարգիսյան, 6. Մխիթարյան:

15

<18 հունիս, 1888>

<Վենետիկ>

Ազնիվ պարոն և սիրելի բարեկամ

Լայպցիգեն գրած Ձեր սիրալիր թուղթն շատ ուրախացուց զիս՝ ծանուցանելով ինձ գործիդ հաջողվին, որուն համար աճապարանք փութացիք թողուլ Վենետիկ, տխրեցնելով Ձեր անկեղծ բարեկամին սիրտը, որ քիչ ժամանակի մեջ ջերմ համակրանք կապվեցավ Ձեզ հետ: Ես չգիտեմ թե որքան ժամանակ պիտի համրեք դուք լայպցիգում և ես ի ս. Ղազար, բայց կարծեմ, թե ի Ռուսաստան, մանավանդ, թե ձեր հայրենիքը, որ է նույնպես և իմը, վերադարձած ժամանակ ուղեկից մի թերևս ունենաք, զոր Անդրկովկասու հայ կաթողիկաց գործերը կթվին հրավիրել անդ՝ հօգուտ ազգային զարգացման: Լսեցի վարդապետ հ. Ղևոնդ Ալիշանեն, թե ամսույս 21-ին հ. Գաբրիելը պիտի վերադառնա ի Վենետիկ, և անտի... կարեք գուշակել, թե ո՞ւր: Ցանկալի էր, որ այսպիսի պարագայի մեջ հանկարծ տեսնել զձեզ վերստին Մխիթարադարաստումը և խոսել ընտանեբար մեր հասարակաց հայրենյաց մասին: Արդ եթե ձեր գործերը չներեն վերստին ողջունելու զՍ. Ղազար, գեթ տարեք դուք մեր ողջունյն և ողջագուրանքն առ ախուրյանաբնակն Անի և առ Ալեքսանդրապոլսեցիս, որոնց հիշատակով հեռավորքս ավելի քան զմերձավորն ճերճերիմք: Շնորհակալ եմ Ձեզ՝ Մյուլլերի հրատարակելիք երկասիրության մասին տված տեղեկության համար, առ որ ես իսկ նամակ մի ուղղեցի ի Վիեննա, բայց տակավին պատասխան չստացա: Այս եզելուքս չգիտեմ, թե գերմանական քաղաքավարությանը ընծայելի է, թե մի այլ անծանոթ պատճառի: Բայց հատուկ կերպով շնորհակալ կլինեմ Ձեզ՝ գերմանական երկասիրությունն ինձ հիշատակ թողնելու համար, որով կանցնեմ հանգստյան վայրկյաններին՝ ի վարժության գերմաներենի և ի հուշ հայրենի հիշատակաց: Գերա<պատիվ> Այտլենյանի՝ հոգվածը վերստին կարդացի, ուր ջանացեր է ի-ի և Ղ-ի մեռած խնդիրներն ևս ի մեջ բերել հակառակ Բագրատունվոյն² և որ ի կարգին իրենն է, բայց պատեհն և պարագայքը հարմա՞ր են գորդյան հանգույցը լուծելու համար, առ որ Ազեքսանդրյան սրեն ավելի լեզվական հմտություն պիտի ի վար արկանէ, և ցայս վայր եղած նախապատրաստությունն այնպես կերևի, թե Գարագաշյանի և մյուս վիեննական հարց կարծյաց հակառակ կարծիք պիտի պաշտպանե հայերեն բաղաձայն տառերու հնչման մասին:

«Արարատի» և նորա պատկառելի հեղինակին վերա գրված Ձեր հոգվածը՝ տակավին չկարդացի։ Բայց երբ կարդալու բախտն ունենամ, ձեզ կգրեմ իմ և այլոց վերա գործած տպավորությունը, հուսամ թե ձեր գրավոր ձայնը՝ ընդարձակ շրջաններու մեջ խուլ արձագանքի պես չպիտի անցնի, այլ զգայուն և արգավանդ սրտերու մեջ կարենա գործել զյուր բարերար ազդեցությունը և հուսացած արդյունքներն առաջ բերել։ Տպարանիս մամուլն տակ եղած ձեզ ծանոթ երկասիրությանց տպագրությունը կառաջեմ։ «Արարատին»⁴ առաջին թերթը դեռ հազիվ լույս տեսած է և գործին ծանոթությունը և գերապաշտ աբբահոր բացակայությանը պատճառով կրիայի քայլերով կընթանա։ Ամենայն հարձ վանացս, բայց ի մասնավորի վարդապետ հ. Ղևոնդ, հ. Գարեգին⁵, հ. Մկրտիչ⁶ և հ. Աթանաս⁷ սիրով կողջունեն զսերդ, հիշելով Ձեր քաղցր կենցաղավարությունը, ընդունե և իմ սիրալիր ողջունես և ողջ լեր համայր ամոք ի հուշ հիշողականս, որում մնամ միշտ հարգանք բարյացակամ։

Հ. Բարսեղ Սարգիսյան, ճ. Մխիթարյան

16

20 օգոստոս, 1888
Վենետիկ, Ս. Ղազար

Ազնվամեծաբ պարոն և սիրելի բարեկամ

Այս թղթով կուգամ ծանուցանել Ձեզ, թե պրոպականդայի հրատարակյալ գրոց ցուցակն հ. Գաբրիել ուղարկած է և իրոք նորա և իմ գրության մեջ նմանություն կա, արդյոք համշիրակացի լինելն կարե լինել պատճառ այս բանիս։ Նա ինքն հուլիսի վերջին օրը հասավ ի Վենետիկ զի կարծած եմ ավելի կայտառ և զվարթ։ Նահա<պետ> հ. վարդապետն կկոչե զնա ի Շիրակ, բայց նորա թերթի մասին դեռ որոշ տեղեկություն մի չեմ կարող հաղորդել, սակայն այս օրերս մի այլ նոր ձեռնադրված շիրակացի պիտի մեկնի դեպի ի Պարսկաստան, արդյոք հանձնարարություն մի ունեք ընելիք։ Վարդապետ հ. Գարեգինին հաղորդեցի Ձեր հանձնարարությունը մատենագրության մասին։ Ըս այժմ խոր արմատացած եմ Մխիթարա 'Իստաստանումը' և հուսամ, թե ցհրատարակությունը գործոյս տեղես չեմ շարժիր։ Բայց գալ տարի, եթե կրկին վերադառնաք ի Վենետիկ թերևս ի միասին ճանապարհորդենք ի ցանկալին մեր Շիրակ, ածելով ընդ մեզ և զհոգին հայրենյաց Ալիշան։ «Արձագանքի» մեջ հրատարակած ձեր հոգվածը² լավ տպավորություն ըրավ մեր ամենուս վրա, բայց կցավինք, որ ավելի ապառաժներու, քան թե արգասաբեր սրտերու մեջ ցանում եք ձեր առ մեծ բանասերն ունեցած համակրանց սերմունքը։ Հյուրըմանի³ նամակն տառադարձության խնդրեն ավելի՝ նորա կոչման գործադրությունը կթվի ինձ վերագրել։ արդ, եթե բոլոր անգրագետ մասն նույնիսկ արևմտյան հայոց Ս. Մեսրոպեա կանոնաց համեմատ կհնչե, Հյուրըմանի կարծած անկարելիությունն իսկ հասարակ և հիմնավոր կարծիք կարող չէ լինել։ Կերևի թե գերմանացու և նորա գործին վերա անխնա գովեստներ շռայլող հոգվածագիրն իսկ՝ զնա անձամբ ճանչցած չէ, ապա թե ոչ Պ. Դը Լաբարդի⁴ և Մյուլլերի փետուրներով զարդարված հայն՝ սիրամարգի պես ուռեցուցած չլինելու։ Այս ընդանի գրությունը գրեթե վերջանալու վերա է,

բայց հուսացածներս իրոք չտեսա, այլ իրենց ժամանակով հնացած խնդիրներն ջանացեր է ավելի մեջ բերել և նորոգել: Վարդապետ Հ. Ալիշանին հարցուցի, բայց նա պատասխանեց, թե վիճենացոց Հ. Ղևոնդին⁵ յուր հաղորդածն դուրս ուրիշ հնագույն արձանագրություններ չի ճանչնար աշխարհարար լեզվով: Գերմանացի լադարդի նոր հրատարակության վերնադիրն այս է. Agathangelus und die Akten Gregors von Armenien. Paul de Lagarde, Göttingen, dictiorische Verlags-Buchhandlung 1884, ինքն ևս այժմ Դյոտինգեն կրնակի: Իսկ Մխիթար Գոշինն է, Separatdruck aus Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft—VII Band. *Das Recht der Armenier von Prof. Dr. J. Kohler.*

Բայց թե ո՞ւր տպված է և ե՞րբ՝ նշանակված չէ գրքույկին ճակատը: Զգոնի⁶ ճառերու լատիներեն տպագրությունը, զոր հանձնած էիք Հ. Գաբրիելին, պրոպագանդա չի գտնվեր, բայց մեր գրատանը մեջ երկու օրինակ կա, եթե կհաճեք, կարելի է Հ. Ալիշանի Ձեզմե ուզած գրոց տեղ փոխանակիլ: Կալիստորատա որդվոցն, Ագաթանդեղոսի վերա տեղեկություններ կուտան Լեոն Ալշատիուս՝ De Georgils Asorum Schriphis diafriba 342, և Ֆարբիկիոս՝ Bibl. gr. v coꝛ 45 Tom X 473—866 խնդրեմ, եթե առիթ ունենաք Հայացիգի գրատունն այցելելու, աչքի անցնեիք այդ տեղիքը և նշանակեիք, թե երբ կապրեր նա, ինչ պաշտոն ուներ, ուստի՞ եկած էր և ո՞ւր մեռավ: Գիտե՞ք, արդյոք, թե Մովսեսի⁷ Հոռմեական կայսերաց պատմությունն ո՞ւր կհրատարակվի, քանի՞ հատոր <է> և ի՞նչ կարժե: Դարձյալ կխնդրեմ, ի Մոսկվա վերադարձած ժամանակ, չի մոռանաք իմ սիրո և մեծարանաց ողջույնը մատուցանելու մեր պատկառելի բանասերին և բարեկամին՝ պ. էմինին: Ողջույն և սերդ բոլոր հարք և վարդապետք վանայս, բայց ի մասնավորի վարդապետ Հ. Ղևոնդ, Հ. Գաբրիել, Հ. Մկրտիչ և Հ. Գաբրիել: Ընդունեցեք նաև իմ սիրալիր ողջույնս և դուք ողջ լերուք ի տեր:

Հ. Բարսեղ Սարգիսյան, ճ. Մխիթարյան

Հ. Գ. Hotel Luna-ի մարդկանց Ձեր հասցեն տվի, բայց Ձեր անվամբ նամակ ստացած չէ մինչև այսօր:

17

27 օգոստոս, 1888
Վենետիկ, Ս. Ղազար

Ազնվամեծաւ և սիրելի բարեկամ

Գիտենալով, որ քիչերեն պիտի թողուք զվառարանն գիտությունից զհրաշակյալն Հայացիգ՝ կփութամ նախ հայտնել Ձեզ իմ խորին շնորհակալությունը՝ վերջին թղթով Ագաթանդեղոսի մասին տված տեղեկության առթիվ, թեև հուսացածս չգտա անդ, սակայն իրաց վիճակին տեղեկության մի ունենալու չափ նպատակամատուցց եղավ ինձ, և այժմ վստահ եմ իմ կարծեցյալ Ագաթանդեղոսին հետ բնավ վերաբերություն չունիլու— Այս վերջերս առիթ ունենալով աչքե անցնելու զԿղ. Կալանոս (Ա հատ., էջ 435)¹, հանդիպեցա Գրիգորի Անավարզեցվո² առ թագահայրն ձեթում³ գրված մեծ ընդարձակ թղթին, որուն սկզբնավորության մի քանի տող միայն գրաբար է, իսկ մնացածն ամ-

բողջապես ռամկորեն անվանել, բայց մասնավոր հատկություններս՝ վ կտար-
բերի այս ռամկորենս Գոշի Դատաստանագրոց ռամկորենն: Հ. Ղեոնդը հա-
րկանցի հիշած է կարծեմ թե «Հանդեսին» մեջ, իբրև ռամկախառն գրաբար,
բայց մասնավոր ուսումնասիրության արժանի է: Բայց ավելի քան զայս
ուշագրության արժանի է Ստեփանոսի Սյունյաց Պատմությունն⁴, որում ժ գա-
րու արձանագրությունք մեջ կբերվեն գոգցես և բոլորովին աշխարհիկ բարբա-
ռով:

Wiener Zeitschrift-ին բաժանորդ գրվեցա, որուն վերջին պրակի մեջ կար-
դացի Փ. Մյուլլերի երկու էջ հոդվածն հայոց նշանագրոց մասին⁵, Բայց
դժգոհ մնացի, որովհետև նորա կարծիքը ոչ նոր է և ոչ ալ գոհացուցիչ, այլ
խիստ հարկանցի անցեր է այնպիսի կարևոր նյութի մասին: Սիրո և մեծա-
րանացս ողջույններս, բարի ճանապարհ կմաղթեմ Ձեզ և գործոց հաջողու-
թյուն և կհուսամ, թե քաջառողջ կգտնեք նաև Ձեր՝ և իմ հին բարեկամն և ան-
կեղծ ողջույնս կմատուցանեք:

Հ. Բարսեղ Սարգիսյան, Բ. Մխիթարյան

18

<1898>

Հարգելի պարոն Գրիգոր մագիստրոս Խալաթյանց
սիրելի բարեկամ

Թույլ տվեք ինձ մատուցանել իմ խորին շնորհակալությունը Ձեզ, այն
պատվական հրատարակության, այն է՝ «Գիրք մնացորդաց ըստ հնագույն
հայ թարգմանության» համար, որմե հաճել եք ուղարկել ինձ օրինակ մի իբրև
ընծա: Շատ զբաղած լինելով, այս օրերս՝ դեռ ժամանակ չունեցա ամբող-
ջապես և մտադրությամբ կարդալու զայն, որպեսզի կարողանայի իմ դիտո-
ղություններս հաղորդել Ձեզ, սակայն և այնպես այժմեան կարող եմ երաշխա-
վորել այդ հրատարակության կարևորությունը, որն անշուշտ մեծապես պիտի
նպաստե դրականապես լուծելու ս. Գրոց հայկական թարգմանությունը նորա
բնագրոց անձի և ժամանակին վերաբերյալ կնճռոտ խնդիրները:

Այս առթիվ կհաղորդեմ Ձեզ իմ ուրախությունս իբր հայոց գրականու-
թյան սիրահար և անխոնջ վաստակավորի, և կմաղթեմ ապագային նույ-
նանման հաջողություններ ևս:

Մնամ ամենայն հարգանք,

Ձերդ անձնվեր Հ. Բարսեղ Սարգիսյան, Մխիթարյան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Խոսքը Հովսեփ կաթողիկոս Արղության-ճրկայնաբազուկի մասին է, որը 1801 թ.
ընտրվել է կաթողիկոս, սակայն էջմիածին չհասած մահացել է Քիֆլիսում:

2. «Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց» ի լոյս է ած Բ. Պ.,
Ս. Պետերբուրգ, 1877:

3. «Պատմութիւն Ղևոնգայ Մեծի վարդապետի հայոց» (Առաջարանը՝ Կ. Եղյանի), Ս. Պե-
տերբուրգ, 1889:

2

1. «Թուղթ ընդհանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեան ներսեսի Շնորհալուոյ», Կ. Պոլիս, 1825:

3

1. Տե՛ս նախորդ նամակի ծանոթագրութիւնը:

4

1. «Մաղաքիս արեղայի Պատմութիւն վասն ազգին նետողաց» ի լոյս ընծանաց Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1870:

2. «Ներսեսի Համբրոնացոյ Խորհրդակցութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին», Վենետիկ, Ս. Ղազար, 1847:

3. Նկատի ունի Գրիգոր Տաթևացուն (1346—1410):

5

1. Դարտել Հովհաննես, Ժամանակագրութիւն Հայոց (Թարգմանութիւնը ֆրանսերէնից Խորեն Նարայելի, առաջաբանը՝ Կ. Նզլանի), Ս. Պետերբուրգ, 1891:

2. Ղևոնդ Ալիշան, Ախոստան, Վենետիկ, 1885:

6

1. «Միխայելի տեան Պատրիարքի Ասորւոյ Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1870:

7

1. Գարադաշյան Անտոն (1818—1903) — պատմաբան, փիլիսոփա, մանկավարժ, խմբագիր: Հրատարակել է բազմաթիւ գասագրքեր, հոգւածներ: Նրա կարեւոր աշխատութիւններից է «Քննական պատմութիւն Հայոց» (4 հատորով), Թիֆլիս, 1895:

2. Հակոբ Գուրգեն (Անտոն Պիպեռլյան, 1850—1915) — հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ: Ծնվել և կրթութիւն է ստացել Կ. Պոլսում, հիմնել է «Հայկական կրթարան» և այն ղեկավարել 1870—1890 թթ.: Խմբագրել է «Ժաշակ ոսկեղեն դպրութեան» ամսագիրը (1886—1888): Գրել է «Համառոտ արվեստ տաղաչափութեան» (1897, Կ. Պոլիս): Պաշտոնավարել է էրզրումի Սանասարյան վարժարանում:

3. Նորայր Բյուզանդացի (1845—1915) — ականավոր Հայագետ: Կրթութիւն է ստացել Վենետիկի Միքիթարյանների մոտ, զբաղվել է մանկավարժութեամբ, խմբագրել է «Բազմավէպը»:

8

1. Լիզմիրյանց Հովսեփ — ղզլարցի հարուստ վաճառական: Նրա կտակով 1884 թ. սահմանվում է հայագիտական լավագոյն աշխատութիւններին տրվող Սահակ-Մեսրոպյան մրցանակը և Մուշում հիմնադրվում օրիորդաց դպրոցը:

2. «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885:

3. Տե՛ս № 1 նամակի № 3 ծանոթագրութիւնը:

4. Ռաֆայել Պատկանյան, Ընտիր երկասիրութիւններ (2 հատորով), Ս. Պետերբուրգ, 1893, խմբագիր՝ Գր. Խալաթյան:

9

1. Ալեքսանդր Երիցյան (1841—1902) — պատմաբան-բանասեր, խմբագիր: Խմբագրել է «Վաճառականը» (Թիֆլիս, 1872), «Кавказские новости» ամսագիրը: Հրատարակել է բազմաթիւ գրքեր:

ձաթիվ հոգվածներ և աշխատություններ: Նամակագիրը նկատի ունի՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում» (2 հատորով, Թիֆլիս, 1894—1895) աշխատությունը:

12

1. Эзов Г. А., Сношение Петра Великого с армянским народом, СПб., 1898.

2. Relation des grandes guerres et victoires obtenues par le roi de Perse Cha Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils en suite du voyage de quelques religieux de l'ordre des Hermites de St. Augustin envoyes en Perse par le roi catholique Dom Philippe Second roi de Portugal. Par le P. Fr. Anthoine de Gouvea, religieux du meme Ordre. Traduit de l'Original Portgals. Rouen, 1646.

3. Սեն-Մարտեն (1791—1832) — ֆրանսիացի խոշոր արևելագետ-հայագետ:

4. Эзов Г. А., Начало сношения Эчмнадзинского престола с русским правительством. Тифлис. 1901. Նույնը հայերեն՝ «Էջմիածնի պատրիարքական աթոռի գրադրությունների սկիզբը ռուսաց կառավարության հետ», Թիֆլիս, 1901:

13

1. Մաթեոս Մամուրյան (1830—1901) — հրապարակախոս, խմբագիր: Մեկնել է Զմյուռնիայում, ավարտել է Փարիզի Մուրատ-Ռաֆայելյան դպրոցը: Հիմնել և խմբագրել է «Արևելյան մամուլ» պարբերականը (Զմյուռնիա, 1871—1901): Թղթակցել է «Մաղիկ», «Մեղու», «Միություն» պարբերականներին: Գրել է «Հայկական նամականի» (1872), «Անգլիական նամականի» (1880), նվրոպական անվանի հեղինակներից կատարել է բազմաթիվ թարգմանություններ:

2. Քիչմիշյան Ալեքսանդր — բնագետ, մանկավարժ, թղթակցել է «Փորձ», «Վարժարան», «Մուրճ», «Աղբյուր» և այլ հանդեսներին:

14

1. Արիստակես Քասախտիլյան — Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, թարգմանիչ, բնագրից թարգմանել է «Մակրեթը»:

2. Նկատի ունի Ղեոնդ Ալիշանին (1820—1901):

3. Դարձյալ հայ գրչագրերի մասին՝ հոգվածաշարը տպագրվել է «Արձագանք», 1888, № 4, էջ 48—51, № 5, էջ 60—64, № 6, էջ 73—75, № 9, էջ 112—116, № 10, էջ 128—131, № 11, էջ 141—143, № 12, էջ 156—158, № 15, էջ 204—206, № 25, էջ 352—353, № 26, էջ 367, № 27, էջ 378, № 30, էջ 411:

4. Chalatiantz G., Marchen und Sagen, Mit einer Einleitung, Leipzig, W. Friedrich, 1887.

5. Մյուլլեր Ֆրեդերիկ (1834—1908) — գերմանացի արևելագետ-հայագետ, պրոֆեսոր: Նրա երկասիրություններից են՝ „Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Wien, 1877, „Über den Ursprung der Vocalzeichen der armenischen Schrift“, Wien, 1864, „Pahlewi, neuperstische und armenische Etymologien“, Wien, նամակագիրը նկատի ունի՝ „Nichtmesropische Schriftzeichen bei den Armeniern“, Wien, 1896:

6. Դարբինի Նահապետյան (1857—?) — Մխիթարյան միաբանության անդամ, գրել է «Ուղղեգրութիւնը ազգային մատենագրաց (Վենետիկ, 1907), «Քրիստոնեական ճարտարագիտություն» (Վենետիկ, 1930) աշխատությունները:

7. «Բառգիրք արվեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» յօրինեալ ի Հ. Մանուկ վարդապետ Բաշունի, հ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1891—1892:

8. Եզ. Հովսեփ — Մխիթարյան միաբանության անդամ:

15

1 Այստեղյան Արսեն (1825—1902) — Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր-լեզվաբան, խմբագրել է «Հանդէս ամսօրեան», թղթակցել է «Նվրոպա» պարբերականին: Ակնարկված հոգվածը տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1888, № 2:

2. Բագրատունի Արսեն (1790—1866)— Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ, բանաստեղծ, թարգմանիչ։ Գրել է «Հայկ դուցազն» պոեմը, թարգմանել է Վերգիլիոսի, Հոմերոսի և այլոց գործերից։ Տպագրել է լեզվաբանական աշխատություններ և դասագրքեր։

3. Գր. Խալաթյան, Հ. Ալիշան և յուր նոր երկասիրությունը (սկյութաբան), «Արձագանք», Թիֆլիս, 1888, № 19, էջ 257—259։

4. Ղեոնդ Հ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890։

5. Զարպհանալյան Գարեգին (1827—1901)— Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր։

6. Յանաղլյան Մկրտիչ (1832—1899)— Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր։

7. Տիրոյան Աթանաս—Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, թարգմանիչ։ Թարգմանել է Մ. Վինկենտի «Գայուս Գրաքքոս» պիեսը։ Գրել է՝ «Հանրագրություն որ է համադրային գրության նոր ոճ մը» (Վենետիկ, 1907), «Արվեստ տաղաչափության» (Վենետիկ, 1913, 1920) և այլն։

16

1. Նկատի ունի Մխիթար Գոշին։

2. Տե՛ս № 15 նամակի № 3 ծանոթագրությունը։

3. Հյուբշման Հենրի (1848—1909)— Գերմանացի արևելագետ-հայագետ, բազմաթիվ հայագիտական աշխատությունների հեղինակ։

4. Պոլ Անտուան Լադարդ (1827—1891)— գերմանացի խոշոր արևելագետ-հայագետ, Գյոտինգենի համալսարանի արևելյան լեզուների պրոֆեսոր։ Ունի մի քանի տասնյակ ուսումնասիրություններ՝ նվիրված արևելքի ժողովուրդների պատմության, լեզվի, մշակույթի, կրոնի հարցերին։

5. Ղեոնդ Հովնանյան (1817—1897)— Վինկենտի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, գրել է դավանաբանական և լեզվագիտական գործեր։

6. Զգոն (Զդան), նաև՝ Հակոբ (III—IV դդ.)— ասորի հոգևորական Մծրնի եպիսկոպոս, նրա լատիներենից թարգմանած ճառերն են «Դիրք որ կոչի Զգոն արարեալ սրբոյն Յակովբայ երեցս երանեալ Հայրապետին Մծրին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հորն մերոյ Գրիգորի լուսավորչին, սակս մանկաց նորոյս Սիովնի», Կ. Պոլիս, 1824։

7. Թեոդորոս Մոմզեն (1817—1903)— գերմանացի պատմաբան, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր, անտիկ պատմության ամբիոնի վարիչ։ Գրել է շուրջ 1500 մեծ ու փոքր աշխատություններ, 1902 թ. ստացել է Նոբելյան մրցանակ։ Ակնարկը վերաբերում է «Հռոմեական պատմության իրավունք» (հ. 1—3, Բեռլին, 1871—1888) մեծածառն աշխատությանը։

17

1. Կղեմես Գալանոս, XVII դ. կաթոլիկ կրոնավոր։ Նկատի ունի նրա «Միաբանութիւն հայոց սր. եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայա աշխատութեան Ա. հատորը (Հոռմ, 1650)։

2. Գրիգոր Անավարդեցի—Հայոց կաթողիկոս (1293—1307)։

3. Հեթում—Կիլիկիայի հայոց թագավոր։

4. «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց ի լոյս ընծանաց Կարապետ վ. Շահնաղարեանց, Փարիզ, 1859։

5. Müller F. Zur Geschichte der armenischen Schrift, Wien ZKM, 1888.